աստուածգիտութեան դարձուցած է, իբր թէ իւր եղած տեղերէն հոգեւոր ու մարմնաւոր ախտերը հալածական բրած է, և վերջապէս ինչ որ բրած էր Յիսուս՝ գուցէ բան մի աւելի ինքն բրած է, (միայն խաչելիը և յարութիւն առնելը կը մնայ գուցէ այդ ալ եպիսկոպոսանալէն վերջը կատարելու համար պահած է)։

(Շարունակելի։)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆԸ Ի ԼԵՍՈՒՆ ՁԻԹԵՆԵԱՑ

Ամէն յառաջ Միսնի միջոցաւ ծանուցինք թէ՝ Ձիթենեաց լերան արեւելեան կողմն Ուսաց ազգին գնած արտին մէջ Հայկական հնութիւններ կը յայտնուին, և խոստացած էինք յայտնուածները հետզհետէ ծանուցանել 'ի գիտութիւն հետախոյզ հնագիտաց Ազգիս Հաւասիկ բացուած տեղերուն նկարագրութիւնը, զոր ստոր մանրամասն կը ստորագրեմք։ Ուսաց նոր շէնքին փոքրիկ դահլիճին ամբողջ յատակը մանր եւ գոյն զգոյն մոզայիքներով եւ աքանչելի պատկերներով զարդարուած է, այնքան ըմբանչելի, որ զգայուն սիրտ կրող ճշմարիտ Հայ մի տեսնելով, առանց արտասուաց կոթիլներ աչքէն թորելը նելու կարող չէ անցնիլ, մանաւանդ եթէ փոքր ինչ ճաշակ ունեցած լինի իւր նախնեաց փառաց և պերճութեանց վրայ։ Այս մանր և գոյն զգոյն մոզայիք վսեմ նկարները այնպիսի գեղեցիկ յարմարութեամբ և ճարտարագործ արհեստիւ շարուած են, որ գոյները և ստուերները կարծեմ թէ դարուս անուանի պատկերհաններն իրենց վրձիններով և ներկերով չը պիտի կարողանան այնպէս յօրինել, թող թէ մանր քարերով շարել, այլ աւանդ, դարուց և ժամանակաց ոչնչանալ դառնու թիւնը հաղիւ թէ յիշեալ ամբողջ սենեկին ընկերներուն քառորդ մասը թողուցած է։ Տարակոյս չկայ թէ նոյն ամբողջ քառակուսի ընդարձակ սենեկի նկարուց մէջ, արդի տեսնուածներուն հետ, կային նաև այլ և այլ նկարներ և պատկերներ և արձանագրութիւններ, այլ դժբաղդեմք որ քանդեալ և ապականեալ է, թէ և անկեալ և խախտեալ բեկորները Ուսաց վանահայրը ժողովելով իրար յարմարցնել կուզէ, սակայն բան մի չը գուշակուիր։ Մնայ մեզ արդ յայտնի տեսնուածները ըստ կարի նկարագրել։ Այս ամբողջ մնացած մասին հիւսիսային կողմն, մէջ տեղը Ներսիսակ գառնոյ մի կանգնած է և գլուխը դէպ 'ի վեր բռնած, գլխոյն վերի կողմը հայկական շինուածքի մի կամար կը տեսնուի սքանչելի յօրինուածներով, նոյնպէս ոտքերուն ներքեւ, բոլորակի մի մէջ կանգնած և թեւերը ամփոփած գեղեցիկ արծիւ մի, բոլորակի մի մէջ սիրուն թռչուն մի, որուն մանչկապատ ուտից յարմարումը հիանալի է։ Երեք շրջանակի մէջ երեք հատ մեծամեծ յիսոնոչ, իւրաքանչիւր շրջանակի մէջ մէկ մէկ հատ, թէ մեծութեամբ և թէ ձեւով իրարմէ տարբեր, որոց թեփերը, թեւերը և կազմուածոց ամէն պարագաները ամբողջ կրտեսնուին։ Շրջանակի մի մէջ երկու ղղիոյ խաղողոյ մէկ մէկ կանանչ տերեւներով։ Մէկ շրջանակի մէջ երկու պրպէյ— պրո—ղներ, (մեզ անծանօթ) և այլ մանր և պէսպէս յօրինուածներ և խաչեր։ Հիւսիսային կողմն լայն երեզի մէջ հին հայկական երկաթագիր խոշոր տառերով մի կարգ գրուած է այսպէս. «Ամէն դիր ի ե-

digitised by A.R.A.R.@

ՐԱՆԵԼՈՒՀՈՒ ՀՈՒՀԱՆԿԱՆ ՄԱՒՐՆ ԱՐ-ՏԱՒԱՆԱՑ , ՀՈՒՒ ԺԷ ։ Այն սենեկին ներքեւ ուրթը հատ քարաշէն ստորերկրեայ գերեզմաններ կան , որ արձակ դռնով մի վար կ'իջնուի , որոց ոմանց մէջ տակաւին մեռելոց ոսկորներ կը գտնուին։ Երբ դահլիճին հիւսիսային կողմն գտնուած սենեակը կը մտնես , որուն դարձեալ յատակը մանր մոզայքներով յարդարուած կը տեսնուի , բայց առանց պատկերի և գրի , ատոր կը մտնես արեւելեան կողմը սենեակ մի , դարձեալ յատակը մոզայք , բայց տակաւին մաքրուած չէր . ասոնք ներքեւ ստորերկրեայ փոքրիկ քարաշէն այր մի որ քանի մի աստիճանաւ վար կ'իջնայ , նոյնպէս տակաւին անմաքուր , թէեւ բարաւորին վրայ հայկական տառեր կը նշմարուին բայց չկարդացուիր։ Նոր շինուած շէնքին կից արեւելեան կողմն , բաւական մեծկակ այր մի , որուն հողերը մաքրելէն յետոյ վրան ալ քարուկիր շինուածով այժմ ծածկած են , ուր կը գտնուին տասն և վեց հատ քարաշէն առանձին առանձին գերեզմաններ , որոց հինգն իրենց միաձայլ և երկհատոր կափարիչներով տակաւին ծածկուած են . իսկ մնացեալները բաց և դատարկ , որոց խորտակեալ քարերուն վրայ մէկ կամ երկու հայկական տառեր կը նշմարուին . իսկ ամբողջներուն մէկին վրայ փորուած խաչ մի և քովն ալ գրուած է — ՋՈՋԻԿ , նոյնպէս միւսին վրայ խաչ մի , և եղծեալ և դժուար ընթեռնելի տառեր , զոր հաղիւ կարացինք կարդալ. ԱՅՍ Է ԿԱՓԱՐԻՉ , որ Թերեւս ուրիշ անուն լինի։ Այսոր դըրան առջեւ բացուած է նաև փոքրիկ այր մի , որուն երեք որմոց վրայ երեք մեծամեծ խաչեր նկարուած են , հարաւային կողմինը ծեփը Թափելով , միւսն խաչին պատուանդանը կ'երեւի , իսկ երկուքն ամբողջ։ Ակէ քանի մի քայլ հեռի փոքրիկ այրի մի մէջ (որ այժմ շինուած և ծածկուած է) դարձեալ մանր մոզայքներով գեղեցիկ յօրինուած դամբարան մի բացուած է , որ այժմ մաքրուած վանդակով և դռներով պատապարուած է , շիրմին վրայ մոզայիւք արձանագրուած է երկաթագիր տառերով հետեւեալը . «ԻԱՐԵՒԱԻՍ ՈՒՆԵԼՈՑՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԶՍՈՒՐԲ ԵՍԱՑԻ ԵՒ ԶԵՐԱՆԵԼԻ ՀԱՐՍՍ ԵՍԱՑԵԱՆՍ ԱՐԱՐԵԱԼՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ ԶՑԻՐԱՏԱԿԱՐԱՆՍ ԶԱՑՍ»։ Այս անձուկ տեղէն փոքր դռնեկով կը մտնես հիւսիսային կողմն եղած մեծ այրն , որուն մէջ մեռելոց ոսկերք լեցուն են և դեռ մաքրուած չէ։ Հողերուն և փլատակներուն ներքեւ գտնուած մոզայքները հաւաքած են , և բաւականաչափ կուտած են մի անկեան մէջ. բայց յայտնէ գտնուած են վեց հատ մեծամեծ ջրամբարներ , որ այժմ նորոգած են։ Ամ այժմ այսքանս բաւական համարելով , եթէ դարձեալ նոր բան մի գտնուի , կը խոստանամք հրատարակել , պատմական ծանօթութեամբ հանդերձ ։

ԱՆԶՆՈՒԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԱՆԱ.

Ազգի մը յառաջադիմութեան , զարգացման և բարգաւաճելուն ամենամեծ առիթներէն մին նաեւ ամենէն գլխաւորը հանրաշահ ընկերութիւնք լինելն անուրանալի է . իրաւ է որ շատոնց 'ի վեր մեր ազգին մէջ ալ շատ ընկերութիւններու խոշոր անուններ լսուեցան և նպաստաւոր յոյսերով ազգին սիրտը լեցուցին , բայց դժբաղդաբար նորա յոյսն ապարդիւն թողին , իրենք կորան եւ իրենց անունն ալ ։

digitised by A.R.A.R.@